# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
# ՆԱԽԱՐԱՐ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Վեբ կայք՝ www.minfin.am, ֆիննախ.հայ
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am
Հեռ.՝ (+374 11) 800 002

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրով Հայաստանի Հանրապետության համար ֆինանսական պարտավորություններ նախատեսող դրույթների առկայության մասին**

2025թ. հուլիսի 22-ին և 23-ին ստորագրված Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ Վարկառու) ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (այսուհետ՝ Բանկ) միջև «Հայաստանի զբոսաշրջության և մարզային ենթակառուցվածքների ծրագիր» վարկային համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) համաձայն Բանկը համաձայնում է Վարկառուին տրամադրել վարկ հետևյալ պայմաններով և դրույթներով.

- Վարկի գումար՝ 96.4 մլն եվրո,
- վարկի տոկոսադրույքի տեսակ՝ լողացող,
- վարկի տարեկան տոկոսադրույք՝ 6-ամսյա EURIBOR + լողացող սպրեդ, որը 31.10.2025թ. դրությամբ կկազմի **3.088%** (2.138%+0.95%),
- պարտավորության վճար՝ տարեկան 0.25% դրույքաչափ, հաշվարկվում է վարկի չմասհանված գումարի նկատմամբ, հաշվարկվում է Բանկի կողմից ծրագրի ֆինանսավորման հաստատումից չորս տարի հետո՝ 17.04.2029թ-ից, վճարվում է կիսամյակային կտրվածքով՝ տոկոսավճարների վճարման հետ միաժամանակ,
- միանվագ կոմիսիոն վճար՝ վարկի գումարի 0.25%-ի չափով, որը պետք է վճարվի ոչ ուշ քան Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օրվա ընթացքում,

- վարկի սպասարկման գծով վճարումները կատարվում են կիսամյակային կտրվածքով՝ յուրաքանչյուր տարվա հունիսի 1-ին և դեկտեմբերի 1-ին,
- վարկի ժամկետ՝ 21 տարի, որից արտոնյալը՝ 9 տարի: Վարկի մարումները կատարվում են հավասարաչափ կիսամյակային վճարումներով, ընդ որում առաջին մարումը՝ 2034թ. հունիսի 1-ին, իսկ վերջինը՝ 2045թ. դեկտեմբերի 1-ին,
- վարկի սպասարկման և մարման արժույթ՝ եվրո,
- արժութային ռիսկը մեղմելու համար Վարկառուն իրավունք ունի վարկի չօգտագործված և/կամ օգտագործված մնացորդի արժույթը փոխարկել Բանկի կողմից հաստատված այլ հիմնական արժույթների,
- տոկոսադրույքի ռիսկը կառավարելու համար Վարկառուն  հնարավորություն ունի փոխել լողացող բազիսային տոկոսադրույքը դրան համարժեք ֆիքսված տոկոսադրույքի կամ հակառակը՝ պահպանելով փոփոխական սպրեդը,
- վարկային միջոցների մասհանումների վերջնաժամկետ՝ 31.08.2030թ.:

Այսպիսով՝ Վարկառուն պարտավորվում է վերոհիշյալ պայմաններով և դրույթներով սպասարկել և մարել վարկը:

Recoverable Signature

X 

Signed by: HOVHANNISYAN VAHE 2903800432

ՎԱՀԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ